ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8
Բնագիտական առարկաների առարկայական մասնախմբի նիստի

Նիստը կայացել է 2026 թվականի մարտի 27-ին:

Նիստին մասնակցել են բնագիտական առարկաների առարկայական մասնախմբի բոլոր անդամները և կրթական աջակցությունների և դաստիարակչական աշխատանքների համակարգող Հ. Մինասյանը:

Օրակարգում՝

1. Նիստի օրակարգի հաստատում (զեկուցող՝ Ա.Սահակյան):
2. Նախորդ նիստի ժամանակ կայացված որոշումների կատարման մասին մասնախմբի ղեկավարի զեկուցում:
3. Ապրիլ ամսվա ընթացքում իրականացվելիք աշխատանքներ, միջոցառումների և էքսկուրսիաների ցանկի և ժամանակացույցի ներկայացում (զեկուցող՝ Ա.Սահակյան):
4. Սովորողների առաջադիմության քննարկում՝ ըստ ԱՈՒՊ-ների (զեկուցող՝ Ա.Սահակյան):
5. Մարտին ավարտված նախագծային աշխատանքների ամփոփում (զեկուցող՝ Ա.Սահակյան):

Լսեցին՝

1. Բնագիտական առարկաներ մասնախմբի ղեկավար Ա.Սահակյանը ներկայացրեց 2026 թվականի մարտի 27-ի նիստի օրակարգը բաղկացած 5 հարցից:

Լսեցին՝

2. Մասնախմբի ղեկավար Ա.Սահակյանը զեկուցեց նախորդ նիստի որոշումների կատարման մասին՝ նշելով, որ

- իրականացվել են մայրության և գեղեցկության տոնին նվիրված բացիկների ձևավորման և պատրաստման աշխատանքները: Բոլոր դասարաններում տիրել է ջերմ, տոնական և ուրախ տրամադրություն:
- Անհրաժեշտ գիրք-տետրերի ցուցակները ըստ դասարանների և դրանց տեսակի ներկայացվել է տնօրինությանը՝ դրանց ձեռքբերման և բաշխման գործընթացը սահմանված կարգով կազմակերպելու նպատակով:
- Մասնախմբի ղեկավարի կողմից իրականացվել են պլանավորված բոլոր դասալսումները: Այն դասարաններում, որտեղ ուսումնասիրվել է առարկայի դրվածքը, արձանագրվել է, որ իրականացվող գործողությունները միտված էին բնությանը և շրջակա միջավայրին խնամքով վերաբերվելու կարողությունների ձևավորմանն ու ամրապնդմանը: Դասերի ժամանակ իրականացվում էր համագործակցային աշխատանք, առկա էին համապատասխան դիդակտիկ նյութեր: Իսկ այն դասարաններում, որտեղ ուսումնասիրվել է դասի բովանդակության համապատասխանությունը ԱՈՒՊ-ով սահմանված նպատակներին, իրականացվել է տարբերակված ուսուցում՝ հիմքում ունենալով սովորողի ԱՈՒՊ-ում սահմանված նպատակը և դրանց համապատասխանող աշխատանքները: Բոլոր դասերի ընթացքում առկա են եղել համապատասխան դիդակտիկ պարագաներ:

- «Անվտանգ և ապահով կրթության տարի» խորագրի շրջանակներում «Բնական աղետներ» թեմայով իրազեկման դասի պլանավորման աշխատանքներըն իրականացվել են և ապրիլի 15-ին իրազեկման դասը կիրականացնի մասնախմբի անդամ Ալինա Թորոյանը:

Լսեցին՝

3. Մասնախմբի ղեկավար Ա. Սահակյանը ներկայացրեց ապրիլ ամսվա համար նախատեսված միջոցառումների պլանը՝ տեղեկացնելով, որ նախատեսվում է իր կողմից իրականացնել «Հիգիենայի կանոններ» թեմայով իրազեկող դասեր: Նշվեց, որ Անուշ Խաչատրյանը ապրիլի 3-ին 5-րդ դասարաններում կիրականացնի Զատկի տոնին նվիրված միջոցառում, Մարինե Պողոսյանը 5-րդ Ա դասարանի սովորողների հետ կկազմակերպի էքսկուրսիա դեպի Երևանի կենդանաբանական այգի, իսկ Ամալյա Խուբլարյանը 8-րդ դասարանի սովորողների համար կկազմակերպի այց դեպի Ծիծեռնակաբերդի հուշահամալիր:

Լսեցին՝

4. Բնագիտական առարկաների մասնախմբի ղեկավար Ա.Սահակյանը նշեց, որ ապրիլ ամսվա ընթացքում իրականացվող ծնողական ժողովների ընթացքում անհրաժեշտ է քննարկել սովորողների առաջադիմության հետ կապված հարցերը՝ ըստ ԱՈՒՊ-ների: Ներկայացվեց, որ այս անգամ ծնողական ժողովները լինելու են առցանց ձևաչափով՝ հաշվի առնելով ծնողների առաջարկները:

Լսեցին՝

5. Բնագիտական առարկաներ մասնախմբի ղեկավար Ա. Սահակյանը նշեց, որ ավարտվել է նախագծային 2 աշխատանք՝ «Բնագիտություն» առարկայից «Կաթնասուններ» թեմայով և «Ես և շրջակա աշխարհը» առարկաներից «Բույսեր. բույսի աճեցում» թեմայով: Իրականացված նախագծային աշխատանքները եղել են արդյունավետ, ստացված արդյունքները բխել են ՀՊՉ-ի վերջնարդյունքներից:

Որոշում է

1. Հաստատել մասնախմբի 2026 թվականի մարտի 27-ի նիստի օրակարգը:
2. Ի գիտություն ընդունել առարկայական մասնախմբի ղեկավարի կողմից նախորդ նիստի որոշումների կատարման վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը՝ արձանագրելով, որ իրականացվել են մայրության և գեղեցկության տոնին շրջանակներում պլանավորված միջոցառումները, կազմվել և տնօրինությանը ներկայացվել են անհրաժեշտ գիրք-տետրերի ցանկերը, ինչպես նաև իրականացվել են նախատեսված դասալսումները՝ ապահովելով առարկայի դրվածքի և ԱՈՒՊ-ով սահմանված նպատակներին համապատասխան դասի դիտարկումը: Բացի այդ, նշվեց, որ «Անվտանգ և ապահով կրթության տարի» խորագրի շրջանակում «Բնական աղետներ» թեմայով իրազեկման դասի նախապատրաստական աշխատանքներն իրականացվել են, և ամփոփիչ դասը կանցկացվի ապրիլի 15-ին:
3. Իրականացնել «Հիգիենայի կանոններ» թեմայով իրազեկող դասերը՝ ապահովելով սովորողների մասնակցությունն ու թեմայի գործնական ընկալումը:

4. Ապահովել Զատկի տոնին նվիրված միջոցառման իրականացումը 5-րդ դասարաններում՝ նախատեսված ժամկետում:
5. Կազմակերպել 5-րդ Ա դասարանի սովորողների էքսկուրսիան դեպի Երևանի կենդանաբանական այգի՝ ապահովելով կրթադաստիարակչական նպատակների իրականացումը:
6. Կազմակերպել 8-րդ դասարանի սովորողների այցը դեպի Ծիծեռնակաբերդի հուշահամալիր՝ ապահովելով համապատասխան նախապատրաստական և ուղեկցող աշխատանքներ:
7. Մասնախմբի այն անդամներին, որոնք ունեն նաև դասղեկական դասարաններ հանձնարարել պատշաճ կերպով իրականացնել ապրիլի վերջին նախատեսված ծնողական ժողովները: Ժողովներն այս անգամ իրականացնել առցանց, քննարկել և ներկայացնել սովորողների առաջադիմության հետ կապված հարցերը՝ ըստ ԱՈՒՊ-ների:
8. «Բնագիտություն» առարկայից «Կաթնասուններ» թեմայով և «Ես և շրջակա աշխարհը» առարկաներից «Բույսեր. բույսի աճեցում» թեմայով նախագծային աշխատանքները համարել արդյունավետ: Ուսումնական նախագծերի վերաբերյալ գրավոր հաշվետվությունը ներկայացնել տնօրենին, իսկ պլանները և արդյունքը (պրոդուկտը) ներկայացնել էլեկտրոնային կառավարման և դասավանդման մասնագետին պաշարների շտեմարանում տեղադրելու նպատակով:

Առարկայական մասնախմբի ղեկավար՝ **Ա.Սահակյան**

Քարտուղար՝ **Ա.Խուբլարյան**

01.04.2026